ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ

12.01.2024 14:12



Հարգելի՛ փաստաբաններ,

Մեկնարկում է այս տարվա մարզամշակութային միջոցառումների շարքը:

Այս տարի առաջինը կլինի **«Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2024»** վոլեյբոլի մրցաշարը, որին կհաջորդեն մարզական ու մշակութային այլ առաջնություններ ու իրադարձություններ:

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2024 թվականի **հունվարի 20-ին՝ շաբաթ օրը, ժամը 11:00 -14:00-ն** կազմակերպում է **«Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2024»** վոլեյբոլի մրցաշար:

Վոլեյբոլի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի և Արցախի փաստաբանների պալատի փաստաբանները, ինչպես նաև Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներն՝ անհատապես, ինչպես նաև թիմային կազմով:

Մասնակցության համար խնդրում ենք մինչև սույն թվականի **հունվարի 18-ը** հայտագրվել ՀՀ փաստաբանների պալատի էլեկտրոնային փոստի հասցեին՝ (info@advocates.am) հաղորդագրություն ուղարկելու եղանակով՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները (թիմի դեպքում թիմի անունը, մասնակիցների անունները, արտանագրերի համարները, ղեկավարի տվյալները):

1-ից 3-րդ տեղերը զբաղեցրած թիմերը կպարգևատրվեն պատվոգրերով և թիմային գավաթներով:

Մրցաշարը տեղի կունենա Երևանի պետական համալսարանի մարզադահլիճում՝ Ալեք Մանուկյան 1 հասցեում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })